իր յիշատակներու մասին (Տե՛ս ՄՁ. Թ. 532 և Ցուց. Պ.)։

ՅԱԿՈԲ ՊԿ. ՍԵՐՈՎԲԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ. — Ծ. 1780ին. Առ. Մարսուանի և Ամասիոյ. Պկ. (1839—1840). Բ. անգամ (1848—1858). 1862ին ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը, արկածով մը վախճանած է հոն 1862ին և թաղուած է Ս. Փրկչի վանքը պատրիարքներու շարքին մէջ։ Իր կտակագիրին և մինչև 1871 թուականը Երուսաղէմի սնտուկը մնացած գումարի մասին տեսնել (Մասիս, Թ. 1168). Յակոբ պտրք. Ներսէս Ե. կթղ.էն 1850ին ստացած էր մարգարտայեռ և պատկերազարդ կոնֆետ մը. որ կը մնար Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցին. տեսնել մանրամասնութիւնները (Անդ. Թ. 1320). իր տապանագիրն է հետևեալը.

«Այս է տապան հանգստեան Յակոբայ Ս. Արքեպիսկոպոսի նախկին Պատրիարքի Կ. Պոլսոյ որ եկեալ յուխտ տնօրինական տեղեաց հանգեաւ ի Տէր.

Յամի 1862 ի 6ն Նոյեմբերի.»։

Արծաթեայ ողկոյզներով և ոսկեզօծ տերևներով զաւազանը յիշատակ կը մնայ Ս. Յակոբի վանքին. (Ցուց. Պ.)։

ՅԱԿՈԲ ՊԵՏՐՈՍ ՈՒՇԱԽԵԱՆ, ԿԱՄԱՐԱԿԱՊՑԻ.— 1777ին Ս. Յակոբի վանքին կը նուիրէ մէկ արծաթեայ կանթեղ ի յիշատակ իր ննջեցելոց. (Ցուց. Պ.)։

ՅԱԿՈԲ ՊԵՏՐՈՍ ԵՒ ԿԻՆՆ ՀԵՂԻՆԷ, ԿԱԼԿԱԹԱՑԻ.—1832ին, այր և կին Ս. Յակոբի վանքին կը նուիրեն արծաթեայ մեծ խաչ մը և երկու հատ սկիհի թանկարժէք մեծ ծածկոցներ։ Հեղինէի վիզէն կախուած ոսկեայ խաչը՝ Կալկաթայի Խաչկեան Յովհաննէս Աւագ քհ. Հնդկաց նուիրակ Ներսէս վրդ ի ձեռօք նուէր կը ղրկէ Ս. Յակոբի վանքին։

ՅԱԿՈԲ (ՏԻՐԱՑՈՒ), պատկերահան և երաժիշտ Ս. Յակոբի. եղբայրը Յովհաննէս, նոյնպէս պատկերահան և երաժիշտ. երկուքն ալ բնիկ Երուսաղէմցի, Հաննէ եպս.ի տոհմէն։ Շղթայակիր՝ Պոլիս գտնուած միջոցին 1738ին կը թղթակցէր այս երկու եղբայրներուն հետ։ Նալեան պտրք. նամակի մը մէջ՝ հաւանաբար 1749ին տիրացու Յակոբին ուղղուած՝ Պոլսէն կը գրէ եւ ի մէջ այլոց կ'ըսէ «չի լինի թէ թուլանաս, և կամ թէ զանց առնուս յերաժշտական երգեցմանէդ. այլ զժրաջանութիւնն յան-